

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

ԹԻՖԼԻՍԵՄ ՀԱՐՎԵԼԷՄ ԵՆ ՎԻՎԻԿԱՅԵՆ ԽՄԲԱԿՐԱՄԱՆ ՎԷՑ:

Օտարաբանագրութիւնս եւ ուղղակի
 Тифлисъ. Редакція „Мшакъ“

ԽՄԿԵՄՈՍՏՈՆԻՐ ԲԱՅ Է՝ ՄԱՍԿՈՒԹԻԱՆ 10—2 ժամ
(ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻ և ՄՈՆ ՕՐԱՐԻՅ) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն, 1 քառ. փ.

Յայտարարում Թիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

UJH

ՄԵԼԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 ԹՎԻՆ

ԿԸ ՀՐԾԱՐԱԿԱՒ ԸՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետևեալ օրերից:

Լրագրի ղեկավարը և պրոդյուսերն Նոյն են ֆուտբ: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԿՆ ԶՆՌԵԳԻՐՆԵՐ: ՄԵՄԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կես տարվանը 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻՍՅՆ ԽԻՐԱԳՐԱՍՈՒՆ ձեռք:

ԵՌԱՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր:
Օտար քաղաքներից պետք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-
ДИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Զնիաթանի վանքը:— Ե երբին տեսու-
թիւն: Երկու Անդրիկեկներ: սոսանման գործը:
Եւմակ: Վաղարշապատի: Դամակ խմբագրին:
Դամակ: Խմբագրին: Երբին լուրեր:—Ար տա-
քին տեսութիւն: Ֆրանսիա: Անգլիա: Դա-
մակ: Թիւրքիայից: Դամակ Թիւրքիայից: Խառն
լուրեր:— «Մշակի» հեղագիրներ:— Յայտարար-
ութիւններ:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Մեր սեփական թղթակիցը Վաղարշապատից հաղորդեց մեզ հետազոտվող որ Վահրամ եպիսկոպոս Մանկունին թողել է վերջապէս Ս. Էջմիածինը, որ ամենքը այդ մասին գոհ են և որ ընդհանուր կարծիք է թէ այժմ վանքի գործերը շատ լաւ կերթան:

ԼՆՆախանձեկի ժողովրդակա-
նութիւն է Վահրամ եպիսկոպոսի
Ռուսաստանի հայերի մէջ ստա-
ցած ժողովրդականութիւնը: Որոշ
պատճառներ ոչ որ չէ կարող բե-
րել իր հակակրութիւնը դէպի
սրբազանը կարգ ապացուցանելու
համար, բայց մի բան անուրա-
նալի է, որ ոչ մի կուսակցութիւն,
ոչ մի մարդ չէք գտնի ամբողջ
Վովկասի և Նիդերվկասի հայ
հասարակութեան մէջ որ համա-
կրութեամբ վերաբերվէր դէպի
Մանկունի եպիսկոպոսը և այժմ,
հաստատ կարելի է ասել, մի կու-
սակցութիւն, մի մարդ չէք գտնի
հայ մուսժող շրջաններում, որ
չուրախանար Մանկունու Ս. Լջ-
միածնից հեռանալու մասին:

Մենք պարզ տեսնում ենք և

անկողնուսպա՛հ կերպով՝ խոստո-
վանվում են, որ այժմեան Աթո-
ղիկոսը շատ բան արաւ, շատ բարի
ձգտումներ ունեցաւ, շատ ձեռ-
նարկութիւններ իրագործեց։ Բա-
ւական է երկու բան յիշել՝ «Ա-
րարատ» ամսագրի ստեղծելը և
Ճեմարանի կառուցանելը և հիմ-
նելը....

Իայց զԺբաղդապէս զերթէ
ամեն բան որին ձեռք էր տալիս
Վհհափառք, նրա շրջապատող-
ների անընդունակութեան պատ-
ճառով անաճող էր լինում: Ըմ-
սագիրը իր հիմնելու օրից մինչև
այսօր ոչ թէ միայն ոչինչ օգուտ
չը բերեց հայ հասարակութեան,
ոչինչ չարաւ, ընթերցանութեան
ոչինչ նիւթ չառաջարկեց ընթեր-
ցողներին, բայց և շատ անգամ
կրքով վերաբերվելով իր հայեացք-
ների մէջ իր հակառակորդների
հետ ունեցած բանակուլութեան
ժամանակ, զորանով բոլորովին
պատիւ չէր բերում հայ եկեղեցա-
կանութեան կենտրոնի, մայր-
աթոռի սեփական օրգանին:

Ով էր «Երարատի» խմբագիր՝
Մանկունին:

Ամենքը ճանաչում են Մանկունուն որպէս ճարպիկ, ընդունակ, ճարտար, եռանդոտ, գործունեայ մարդու,—բայց ոչ դը չէ սիրում նրան: Ամենքը գիտեն որ Կաթողեկոսից յետոյ Մանկունին ամենամեծ նշանակութիւն ունէր վանքի մէջ, և գուցէ Վեհափառից յետոյ առաջին դէռ էր խաղում

Ս. Լճիաճնում,— և այդ պատ-
ճառով ամեն տեսակ անաջողու-
թիւններ և սխալներ որոնցով
գժեբաղդապէս շատ հարուստ էր
վանքը վերջէն տարինները, հասա-
րակութիւնը Մանկունտուն էր վե-
րաբերում...

Վանքում սկսեցին սուտ թըղ-
թաղըրամ շինել, — հասարակո-
ւթիւնը ասում էր՝ ինչի Մանկու-
նին լաւ է հսկում: Ճեմարանում
խայտառակութիւններ են պատա-
հում, — հայ հասարակութիւնը աս-
ում է այդ բոլորը Մանկունու
մեղն է և այն....

Ախալ էին թէ արդար Ման-
կունու վրա հասարակութեան
կողմից բարձած մեղադրանքները,
բայց երբ որ մի մարդ Մանկու-
նու պէս լիազօր է, բնական է
որ նա ենթարկվի ամեն տեսակ
մեղադրանքներին, որովհետեւ նրա
յանձն առած պատասխանա-
ստութիւնը մեծ է:

Իսկ եթէ մեզ հարցնեն արդեօք համաճայն ենք մենք մեր թղթակցի կարծիքի հետ, թէ Սանկունու հեռանալուց յետոյ վանքի գործերը աւելի լաւ կերթան,—մենք կը պատասխանենք հենք կարծում:

Միայն այն ժամանակ վանքի գործերը լաւ կերթան երբ վանքի ամբողջ կազմակերպութիւնը կը փոխվի. Մանկունիին և նրա պէս-ները ծնունդ են վանքի այժմեան անմխիթար կազմակերպութեան....

Երբեք մեր եկեղեցին այդքան աղքատ չէ եղել գործունեայ, հասկացող, արհեստ և անձնուէր մարդիկներով, ինչպէս այժմ: Մանկունին գնաց, նրա տեղը կը նստի մի այլ արեղայ, որ նրանից լաւ չէ լինի, բայց գուցէ նրանից էլ աւելի անոնդունակ կը լինի:

9. 11

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԵԵՎ ՍԿՈՒ ՍՊԱՆՅԱՆ, ԳՈՐԾՐ

Նոյեմբերի 25-ին, շաբաթ օրը Թիֆլիսի
Դատաստանական Պալատում նորոգվեցաւ օ-
րինորդ Անդրէիկովսկու սպանման գործի քննու-
թիւնը:

Նիստը բացվեցաւ առաւօտեան 11 ժամին
 և 20 ժող.:

Դատարանը կազմված էր հետևեալ կերպով՝ նախագահ Օգոլին, անդամներ Չըրանցիկ և Բակալց, քարտուղար Մզբերով, մեղադրուհի էր պրօկուրորի օդնական Բիկով, պաշտպանուհի էր Ս. Պետերբուրգի երդուեալ հաւատարմատար Սպասովիչը։

Վկաներից ներկայացան միայն Վեթոբել, Տօպուրիա և Մենաբդի-Շվիկի: Էկսպեկտանտներից բոլոր չորս էլ ներկայ էին, այն է՝ բժշկներ Գորայեվիչ, Իլևմբեդով, Դլավատսկի և Պավլովիչի: Բացի նրանցից ներկայ է պաշտպանութան կողմից հրաւիրված էկսպեկտաթ, Ս. Պետրբուրգի բժշկական ակադեմիայի պրոֆեսոր Ս օ ր օ Կ ի ն:

Մեղադրվածների նստարանի վրա բացի
Դաւիթ Ձև ու տ ա յ ի ց ե Գ ա բ ի ս օ-
ն ի ա յ ի ց նստած է նոյնպէս նիկոլայ Ձև օ-
տ ու ա որ արդարացրած էր նա հանգանակն
դատարանի մէծով, բայց որին պրօկուրորի
բողոքի հիման վրա պաշտար կրկին ենթար-
կեց մեղադրանքին:

Իսհլիճը լի է ամենաընտիր հասարակու-
թեամբ, կանանցով և բարձրաստիճան պաշ-
տոնեաներով: Եկպեթյաններից դեպի աջ կողմը
պատուհանների մօտ, ուղիղ գեկուցանողի և
քարտուղարի առջև դրած է մի մեծ սեղան
տեղական մամուլի համար: Մամուլի ներկա-
յացուցիչների մէջ երևում են՝ «Тифл. Вѣс-
тн.», «Обзоръ», «Մշակ» և «Իրօբքա» լրա-
գիրների խմբագիրները նշյապես «Полѣсь,
լրագրի Թղթակիցը, վրաց խմբերի» լրագրի
աշխատակիցը և «Փորձ» ամսագրի խմբագիրը:

Մեղադրվածներից, մինը, այն է Դաբիս-
նիա շվեթաներով է։ Նա դիմում է դատա-
րանին խնդրելով հանել տալ նրանից շվեթ-
աները։ Գրովուրորը մերժում է։ Նախադաշը
անդամների հետ խորհրդակցելուց յետոյ հը-
րաւորում է Թիֆլիսի աւազ—պոլիցի, լմեսու-
րին և նրանից համաձայնութիւն ստանալուց
յետոյ, հրամայում է հանել շվեթաները Գա-
բիսոնիայից։ Դատարանը հեռանում է խոր-
հրդակցական սենեակը մինչև որ Գաբիս-
նիային ազատում են շվեթաններից։ Նիստը
կրկին սկսվում է մի քառորդ ժամից յետոյ։

Պրիվեւորօրը անհնարին է համարում գործի քննութիւնը մի քանի վկաների բացակայութեան պատճառով: Պաշտպանութիւնը հընարաւոր է գտնում: Դատարանը վճռում է շարունակել նիստը:

Պաշտպան Սպասսովին խնդրում է դատա-
բանից կանչել որպես վկայ իշխան Գեորգ
Ծ Ե Ր Վ ա շ Ի ճ Ե Ն, որի վկայութիւնը նրա
կարծիքով կարող է շատ օգտակար լինել գոր-
ծի պարզելուն, կարող է գուցէ և բացորոշին
նոր ընթացք տալ գործին։ Իշխան Ներսիս-
շԻՃԵՆԻԿԱՐԿԻՎԱԾ է եղել նախնական քննու-
թեանը, բայց յետոյ գործի Նահանգական
դատարանի մէջ քննվելու ժամանակ Հեռա-
ցրած է եղել վկայութիւն տալուց։

Պրոկուրորը աւելորդ է համարում իշխան
Շէրվաշէնին որպէս վկայ կանչելը, օրովհե-
տե այդ հարցը արդէն վճռված է եղել բա-
ցասական կերպով Նահանգական դատարա-
նում:

Պաշտպանը պնդում է իշխանի վկայութեան անհրաժեշտութեան վրա, յիշելով որ մեղադրված Դաւիթ Ձխտուռ շատ անգամ խնդրել է այդ մասին, բայց նրան դատարանը

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԲԱՆՍԻԱ

Դեռ հազիւ զիտեին Փարիզում Իտալիայի Հումբերտ թագաւորի դէմ եղած եղեռնագործութիւնը, որ արդէն յետադիմական լը-րագիրները սկսեցին մեղադրել հանրապետականներին: Այդ դրանց սովորութիւնն իրանց հակաակորդները վրա ձգել ինչ որ տաղալիք է: Իրանց փոյթը չէ ոչ ճշմարտութիւնը և ոչ զօնէ ճշմարտաման լինելը: Փրանսիայում բաւական զիտեին թէ ովքեր են Իտալիայի թագաւորութեան բարեկամները և թշնամիները: Այս յիշատակի ու բարձրանքների յամառութիւնը, որոնք դասակարգներում բարկութիւն ու զգուհնք է դրում: Տխուր բան է մրցել այնպիսի մարդկերանց հետ, որոնք ամեն զէնք էլ բարի են համարում հանրապետութեան գէմ յարձակելու:

Աշխարհման սենատորները մի լիակատար ժողով են կազմել առնելու իրանց յաղթութիւնը: Իրանք իրանք իրանց շնորհաւորեցին որ կարողացան պ. Բարանտին պէս մի ժողովողական մարդ վստասելու: Պատգամաւորների ժողովը իրան կուրութեամբ նրան փախցրեց: Սենատի մեծամասնութիւնը նրան ընդունեց. այս նրա թէկ վերջին, բայց ամենամեծ գործը կը լինի: Թէ որ սենատը չը լինէր պ. Բարանտինը դեռ մինչև այժմ էլ զբաղված կը լինէր Նիմի դատաստանաներում չնչին գործեր պաշտպանելով, բայց այժմ նա կարող է իրան գործի համար աւելի լայն ասպարէզ ընտրել. ահա նա մեծ մեծ քաղաքական հարցերով է զբաղված:

Պ. Բարանտինի ընկերակիցները միմեանց փոխադարձաբար շնորհաւորելուց յետոյ, նը-րանցից մէկը, պ. Լարիյոսին ասում էր «Միութիւնն է որ մեզ մինչև այժմ յաղթող հանդիսացրեց, ուրեմն պէտք է շնորհաւորենք միութիւնը: Օրէնսդրականներ, շարունակում է նա, քուէարկեցէ՛ք օրէնսդրականների համար. յունվարի 21-ը շատ հեռու է և Բիշլի պալատի սկանդալներն էլ շատ նուրբ են: Օրէնսդրականներ, քուէարկեցէ՛ք ղեկավարների մարդոց համար: Պէտք է այսօր ընկձել հանրապետութիւնը: Դուք յետոյ կը համաձայնեցէ՛ք մեր սկզբունքների հետ, եթէ դուք անդրդուելի մնաք»:

Ուրբաթ օրվայ սենատական ընտրութենից յետոյ մի հետաքրքիր անցք է պատահել. հաւատացնում են թէ այս փայլուն յաջողութենից յետոյ, Ելիսեան պալատում նոր յայտ են ստանում: Այնտեղ աշխատում են համոզվել որ մի և նոյն բանը կը պատահի Փրանսիայում ինչ որ պատահեց սենատում, ուրեմն և այն ընտրութիւնները կու-նենան, ինչ որ 1876 թվին: Եթէ այս բանը ձանարիտ է, ուրեմն պէտք է խոստովանած, որ այդ մարդիկ վերին աստիճանի հնշտայոյս են: Երեք տարուց ի վեր ժողովողական կարծիքը փոքր ինչ յառաջդիմութիւն է արել և սենատի մեծամասնութիւնը, իր սխալներով և մանաւանդ իր անլուծանելի լինելու սխալով, քիչ չը նպաստեց ժողովողական կարծիքի յառաջդիմութեան գործին: 76-ին իշխանութիւնն էլ, ոյժն էլ իրանց ձեռքին էր: Եւ մենք շատ լաւ գիտենք թէ պահպանողականները ինչպէս են խաղում: Օրէնքի հետ, երբ նրանց է յանձնած վարել ընտրութեան գործը: Բայց մենք ոչինչ չենք ասում, որովհետև մենք չենք սիրում չը պարտել այնպիսի մարդոց, որոնք սենատական ընտրութիւնների համար Բայց միայն այսքան էլ այնպիսի աշխատողներ, ինչպէս և ընդհանուր ընտրութիւնների համար: Բայց միայն այսքան կասեց որ դրանք թէ առաջին թէ վերջինի մէջ, բնաւ անգործ չը մնացին:

Իսկ այժմ որ սենատական ընտրողները աէր են իրանց քուէարկութեան, և այժմ որ

այլ ևս ոչ նրանց կարող են խաբել, և ոչ էլ վատեցնել, կը տեսնէք թէ նրանք ինչ են մտածում մայիսի 16-ի և լուծման մասին:

Սպասում են այն պատասխանին, որ սենատորական աջակողմը պէտք է տայ այն հարցին որը նրան երէկ բերեց պ. Փուրտուն: Պ. Բրոյին կը վստահանայ արդեօք յառաջ բերել օր ցերեկով այն բազմաթիւ հարցաքննութիւնները, որոնց մասին այսչափ երկար ժամանակէ ի վեր խօսում են: Եթէ հաւատարմը նրան ինչ որ խօսվել է աշխարհականների ժողովում, նրանք պէտք է մերժեն մի քանի ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ հարցուփորձեր և պէտք է բաւականան միայն բացատրութիւն պահանջելով: Մարտիկայի խռովութեան մասին և սենատորական ընտրութեան տեղի մասին:

ԱՆԳԼԻԱ

Պ. Գլադստոնը պատասխանելով մի յայտարարութեան, որ նրան ներկայացրել էր Բէդֆորտի ազատամիտների ժողովը, յարձակվում է լորդ Բիկոնսֆիլդի շարժվել երեկոյան Լօն-դօնի Գլիֆֆալում խօսած ճառի վրա:

Ազատամիտների նախկին գլխավորը յայտ-նում է, որ նրան հաճելի է իմանալ կառավարութիւն կարծիքը Հնդկաստանի ասպա-տակութեան կարեւորութեան մասին: Եւ, աւելացնում է նա, որովհետև կառավարու-թիւնը Հնդկաստանի վրա յարձակվելը ան-կարելի է կարծում, ինչպէս ուրեմն թշնա-մին կարող է մեր առաջ արգելքներ հանել այս գաղութականութեան սահմանների վրա:

Պ. Գլադստոնի կարծիքով սահմանը կանո-նաւորել բառերը մի ղեկավարական խօսք է, որ կը նշանակէ միտցնել: Եւ այսպէս, ասաց նա, մենք իրաւունք չունենք միացնել մեր հարեանների հողերը, միակ այն նպա-տակով, որ մենք մեզ համար գիտական սահ-մաններ ունենանք:

Խօսելով Բերլինի դաշնագրի մասին, հոե-տօրը համաձայնում է, որ Անգլիան պարտա-կան է պահպանել այս դաշնագիրը, և նա իս-կոյն աւելացնում է, բայց անգլիական կառա-վարութիւնը նրան կը պահէր մի շատ աւելի լաւ շնորհով, եթէ մենք եղծած չը լինէինք Փարիզի դաշնագրութիւնը, ինչպէս և բոլոր պետութիւնների դիտաւորութիւնը, Բերլինի ժողովում, ստորագրելով անգլո-թիւրքական դաշնագիրը:

Պ. Գլադստոնը պատասխանում է խոստագէտ Բիկոնսֆիլդի արեւելեան քաղաքականու-թիւնը: Ռուսաստանի դէմ ամենալաւ պատ-նէշ կը լինէր, ասում է նա, եթէ Թիւր-քիայում հաստատվէր տեղական ազատու-թիւն, ազատութիւն, որ թանգ կը լինէր ժողովողի համար, և որին ժողովուրդը կը պաշտպանէր ու երբեք չէր համաձայնվի մատ-նել Ռուսաստանին և որ և է մի ուրիշ պետութեան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՆԵՐ

Կ. Պոլսի 16 նոյեմ.

Յաւալի լուրեր. կերակի օր Մարաշէն հեռա-գիր մը կը հասնի ի պատրիարքարան ծանուցա-նելով թէ Հալէպի կուսակալը վերստին Ձէյ-թուն երթալով զանգառանաց տուող խնդիրնե-րն կարգադրեր և ժողովուրդը գոհացուցեր է: Մինչ այս հեռագրին վրա կը զարմանայինք, չը գիտնալով թէ ինչ տեսակ կարգադրութիւններ եղած են, ահա երկուշաբթի երեկոյ, 13 նոյեմ-բերի մի ուրիշ հեռագիր կը հասնի թէ Թիւրքաց բանակն Ձէյթուն մտեր է. Ձէյթուն ասպտաբ գաւառ մը կը նկատէ կառավարութիւնը. կարևոր հայեր կը ձերբակալուին, և տուրքերը ամենայն խստութեամբ կը պահանջեն: Պատրիարքը ան-միջպէս սոյն հեռագիրը հաղորդեց Ղրան և վեց տէրութեանց ղեկավարներուն:

Երբ մենք կը սպասէինք Ձէյթունի համար

բարեկարգութեանց, ահա այս դառն լուրերն կառնումը. անշուշտ երբ նամակներ հասնին ըն-դարձակ անդեկութիւններ կը ստանանք: Սակայն Թիւրքաց բանակին Ձէյթունի մոտաւ դառն հա-րուած մ'է մեզ: Այդ լուրերն ազգային վերա-կենդանութեան կայծերն կը պարունակէին, կա-ռավարութիւնը խելամուտ այդմ, ամեն հնարք ըրաւ որ Ձէյթունցիներն իր ուղածին պէս նուա-ճէ և եթէ հնար է բարբոսին փնտցնէ, և ասպ-հով եղէք որ իւր նպատակին շուտ կը հասնի եթէ հարկաւոր միջոցներ ձեռք չառնուին: Անգ-ղիոյ կառավարութեան Թիւրք կառավարութեան համաձայն լինելուն անհրկայ եմք. զի Անգլիոյ ալ հաճոյ է որ Վիլիկիոյ կողմերն դժուարու-թիւնը չը պատահին:

Երբ մի վարդապետ և երկու երիտասարդներ Պոլսի եկան ձեռք գրած էի թէ այդ մարդոց կա-րևորութիւն չը տրուեցաւ: Արդ այժմ կը հար-ցուի արդեօք այդ մարդերն կարևորութիւն ու-նէին և պատրիարքարան չուղեց տալ, և ինչ պատճառով: Ձէյթունի մէջ եթէ ասպտաբու-թիւն չը կար ինչ է այս բանակն որ հոն կեր-թայ: Եթէ կար ասպտաբութիւն ինչպէս եղաւ որ ազգային իշխանութիւնը կարևորութիւն չը տուաւ այս գործին, խնդիրներ են որ մութ մնա-ցած են: Ձեզ գրեցի թէ Ձէյթունի խնդրոյն մէջ պատրիարքարան շատ թոյլ չարժեցաւ, այժմ կըսեն թէ Գուռն շատ ջանքեր ըրած է որ պատ-րիարքարանի շնորհիւ Ձէյթունցիք խօսանքի Ա-մէտ-փաշային իրաւունքին, և յաջողեր է, որով Ամէտ-փաշա լարտուեցաւ, և Ձէյթուն աւե-րեցաւ: Ստոյգ է թէ Գուռն չէր գիտեր, սակայն շատ կը փախկանք թէ այս գործին մէջ դար-ձեալ պատրիարքարանը անգիտաբար խաբուե-լով դարձեալ քաղաքագէտներու գործիք եղաւ, և թէ ինչ է այս քաղաքականութիւնը գուցէ վերջերն լոյս առնելով հաղորդեք: Այս դար-ձաւորներուն վրա ինչ տեղեկութիւններ ստա-նամք կը հաղորդեմք. փափագել է որ «Մշակ» Ձէյթունի խնդրոյն նկատմամբ կարևորութիւն ընծայէ և յուզէ զայն իւր առաջնորդող յօդուած-ներով: Նոյն գիշեր, 13 նոյեմբեր, Տիգրանակեր-տէն հեռագիր կը զարնուի պատրիարքարան թէ ստորագրել հարստահարութիւններ տեղի ունե-ցան, չէրքեղներն և վայրենի քիւրդերն սպանու-թիւններ ըրին: Պատրիարքը սոյն հեռագիրն ևս հաղորդեց ղեկավարներ:

Վաղքիս կերտու հայ թերթերէն մին «Թերթի-մանը էֆքեթար» կը գիտէ թէ Պէրլինի վեհաժո-ղովն վերջ չայատաանի հարստահարութիւնը աւելի բազմացան, և այդ հարստահարութիւններն կը գործուին որպէս զի հայերն կամ բոլորովին ձգեն երթան որով ասպարէզն տաճկաց մնայ, կամ այնպիսի խեղճ վիճակի հասնեն որով ան-կար լինի որ և է ազգային շարժման:

Ահաւասիկ ինչ չափեցանք առ այժմ Բեր-լինի վեհաժողովն, Ձէյթունի գերութիւնը և աւերումը. Հայաստանի հարստահարութեանց բազմապատկութիւնը:

Հայկակ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՆԵՐ

Երբքում, 3 նոյեմբերի

Վաղը պատրաստվում եմ կամարականի հետ թողնել Երբքումը գուցէ յաւիտեան: Ո՛ր ցանկա-լի կը լինէր դէթ մի անգամ ևս ընկնել Հայաս-տան թէկե՛ղ այնտեղ մեռնելու համար.... Իսմայիլ և Մուսա-փաշաները այսօր մեզ մօտ էին, որոնցից առաջինը դառնալով դէպի ինձ ասեց. «Տար ինձից Լազարեվին իմ սիրտ ող-ջոյն և ասան եղբորս որ միտմիտ մնայ ալաշ-կերտաց համար. Թո՛ղ սուրբ Ղորանը ինձ իրան պաշտելու արժան չը համարէ, եթէ ես նոցա համար այնպէս հոգ չը տանեմ, ինչպէս իմ ան-ձիս համար»։ Երբքուն արտասանեց այս խօս-քերը հանդիսաւոր կերպով ձեռքերը դէպի եր-կինք բարձրացնելով, որից նա խնդում էր կա-րողութիւն իր ցանկութիւնը տեղ հասցնելու հա-մար: Աւելորդ չեմ համարում կրկին ևս յիշել այն ինչ սպասում է Ալաշկերտացի, երբ նոցա վերադառնալու լինեն իրանց տեղերը:

Նախ սովորականի հրամանին համեմատ ազատ-վում են նոցա երկու տարով բոլոր տուրքերից. նոցա թիրախում են ևս անմիջապէս այն կայքին ու հողերին, որ ունէին առաջ իրանց ձեռքին, նոցա ազատվում են միանշա՛մայն ընդ միտ այն հարստահարող քիւրդ բէգերից, որոնք տաս-նեակներով բռնած գցած կան Երբքումի բան-տերի խորխորանները, նոցա իրաւունք են ըս-

տանում զանգաւոր և ուրիշ եկեղեցական հեղ-քին և արտաքին պահանջներ գործածել ամե-նայն վստահութեամբ և ազատութեամբ, վերջա-պէս նոցա կուռնեան միշտ իրանց պատպանու-թեան համար հարկաւոր եղածին չափ զօրք, որ արդէն ուղարկված են այնտեղ ամենայն պա-րագայում քիւրդերին հալածելու և պատժելու հա-մար: Ահա սոքա են այն պայմանները, որոնց կատարելը խոստացաւ քիւրդերի սպանալիք իսմայիլ գայլ փաշան Լազարեվին և Աստուծուն, և որչափ կարողացանք ճանաչել բարեպաշտ փաշային, նա ամենին նոցանից չէ, որ ան-տարբեր են դէպի իրանց խոստումը: Թող ալաշ-կերտցիք էլ ժամանակ չը կորցնեն վերադառնալու վստա լինելով իրանց վիճակի վրա, ինչպէս այդ հաստատում են նոցա, որ արդէն յետ են գնա-ցել: Դե՛հ մնաւ բարեաւ Երբքում, մնաւ բարեաւ Հայաստան, զո հարազատ որդին միայն մի գի-շեր կը տեսնէ էլ իր քաղցր երազները քօ ծոցի մէջ.....

Գրիգոր Նիկողոսեան

ԻԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

«КАВКАЗ» լրագրի տեղական լուրերի բաժ-նում կարդում ենք հետեւեալը: «Գնեթալ Արժու-նին 1877 թվ յուլիս և օգոստոս ամիսներում ձրիաբար առեց վիրաւորված և հիւանդ զինուոր-ների ընկերութեան վիճակային կառավարու-թեանը, պատերազմի ամբողջ թիւնքի համար, տասն և յոթ խանութներ իր գալլերում, Գը-վօրցօվի փողոցի վրա, որպէս զի ընկերութիւնը այդտեղ իր պահեստներ խոնհայ: Տարեկան վճարը այդ մագաղիներին համար հասնում էր այն ժամանակ մինչև 2000 ռուբլ: Յետոյ Արժ-ունին այդ մագաղիներին դարձեալ մի մագա-ղին աւելացրեց: Գնեթալ Արժունու մահից յե-տոյ նրա ժառանգները դարձեալ թողեցին այդ մագաղիները ընկերութեան կառավարութեան ձեռքում: Պատերազմի վերջնական յետոյ, ըն-կերութեան իրեղէնների համար պահեստի տեղ ունենալու անհրաժեշտութիւնը աչքի առաջ ունեցելով իրեւալ տան տերերին առաջարկեցան նշանակել մի վարձ վիճակային կառավարու-թեան ձեռքում մնացած խանութների համար: Հանգուցեալ Արժունու ժառանգները մերժեցին այդ առաջարկութիւնը և ձրիաբար թողեցին մա-գաղիները ընկերութեան ձեռքում մինչև յուն-վարի 1-ը 1879 թվ: Յիշեալ մագաղիներից այժմ մնացած են ընկերութեան ձեռքում 9 մա-գաղին: Վարձը այն պահեստների որոնց ընկե-րութիւնը իր ձեռքում ունէր յուլիսի 1-ից մին-չև սեպտեմբերի 15 և շարունակում է այժմ վա-րել, կը նստէր կէս տարվայ համար մօտ 1000 ռուբլ: Կովկասեան վիճակային կառավարու-թիւնը իր արձանագրութեամբ, որ կայացաւ հոկտեմբերի 12-ին, վճռեց յայտնել զենեալ Արժունու ժառանգներին շնորհակալութիւն յի-շեալ նուիրատուութեան համար և այդ մասին յայտնել Գլխավոր կառավարութեան գրասի-թեանը, Նորին կայսերական Մեծութեան կայս-րուհուն, Ընկերութեան Օգոստոսիան Հովանա-ւորուհուն և ամենապատակ ղեկուցում ներկայաց-նելու նպատակով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, նոյեմբերի 28-ին: Երէկ Ձեռնային Պալատում հանդէս էր կատարված Ս. Գէորգի միաբանութեան հիմնադրութեան համար Ս. Գէորգի պատանշանի ասպետ-ների ներկայացման ժամանակ Գուրգո ստա-ցել է Ս. Գէորգի պատանշանը երկրորդ աստիճանի, Լազարեվ գնեթալ-աղիւտանա-տի տիտղոսը, Իրաքովիով անունը մացը-րած է Վոյնեան հեծելազօր գունդի ցու-ցակների մէջ: Մեծ իշխան Կոստանտին Կոն-ստանտինովիչ Կայսրին և Հայրենիքին հաւա-տարմութեան երգում տուեց: «Прив. Вѣстн.» լրագիրը ասում է որ Տիմաշևի միջնորդը համե-մատ իր խնդիրը հիւանդութեան պատճառով տրձակված է այժմեան պաշտօնից և նրան շնորհված է Ս. Վլադիմիրի առաջին աստի-ճանի պատանշանը: Ներքին գործերի մինիստ-րի օգնական Մակով նշանակված է Երբքին գործերի մինիստրի պաշտօնը վարելու: «ГО-ЛОСЬ» լրագրին հաղորդում են նոյեմբերի 26-ից, Սօֆիայից, որ Ս. Գէորգի տօնախմբ բութեան օրը այդտեղ բացվել է մի զինուոր-ական դպրոց: Բուլղարները ոգևորութեամբ ողջունեցին դպրոցի բացումը: ԲԵՐԼԻՆ, 27 նոյեմբերի (9 դեկտեմբերի): Իշխան Գուրգով ընդունեցաւ Վիշնիվ կայսրից և թագաժառանգ իշխանից: Այսօր երեկոյան նա վերադառնալու է Ս. Պետեր-բուրգ:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ